ԱՆՆԱ ԿՈՍՏԱՆՅԱՆ
Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ
Բանասիրական ֆակուլտետ
Մագիստրատուրա 1-ին կուրս

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ՄԵԾ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ԿԻՍԱՆԴՐՈՒ ԱՌՋԵՎ

Տարիներ են անցել. ծանրումեծ հիշողությունների կծիկը եկել բազմել է, ու թվում է, թե հուշը թել է հյուսել, բայց անմահ լուսավորչի՝ Խաչատուր Աբովյանի ժողովրդասիրության, անհուն հայրենասիրության պատգամը այսօր, առավել քան երբևէ, ուղենշային է. «Մենք պետք է մտածենք գլխավորապես այս երկրի մատաղ սերնդի մասին»: Հարյուրամյա բուհը, սիրելի՛ Աբովյան, իմ հայրենակիցնե՛ր, այս մեծ պատգամը հայտնի ճշմարտության կերպարանքով կամուրջ է դարձրել, պատվանդան, որի վրա կանգնում է արարող, լույսին ձգտող, ականատես ու ականջալուր հայը...

Մեկդարյա պատմություն ունեցող բուհը հետամուտ է՝ ուսանողների քաղաքացիական դիրքորոշման ձևավորմանը, ինքնադրսևորման խթանմանը, հոգևոր, գեղագիտական, աշխատանքային, ֆիզիկական, իրավական, էկոլոգիական դաստիարակմանը, դպրոցը՝ որպես ազգի հարատևման ոգի բարձր պահելուն, աշխատանքային կարևոր ուղղություններից մեկը պրակտիկայի կազմակերպումը համարելուն, «365 օր դպրոցում՝ ուսուցչի և աշակերտի կողքին» նշանաբանով գործելուն, տարաբնույթ միջոցառումներ կազմակերպելուն, ներբուհական թերթում սիրով, սիրով, սիրով անհամար հիշողություններն ամփոփելու ավանդույթին...

Սիրելի՛ Աբովյան, երջանկությանս զգացողությունը ավելի տարողունակ է դառնում, երբ հիշում եմ դասավարումները դպրոց-արվեստանոց անունը կրող իմ աշխարհում... Միշտ էլ նահանջում ենք հիշողությունների դաշտում ու կարոտում.

կարոտեցի այդ տաք անկյունը, ուր դասավարելու հնարավորություն ունեցա, ուր պատասխանատվությունս ավելի կրկնապատկվեց, հասկացա, որ ճիշտ մասնագիտություն եմ ընտրել: Այն, ինչ ուղղակի պատկերացրել եմ, իրականությանը մոտ էր, շատ մոտ ու շոշափելի, մնում էր գիտելիքների հարուստ պաշարով, պատրաստված ձեռք զարկել ամենաէականին...Կարմիր ու տաք սիրտ ունենալու զգացողությունը պարուրեց ինձ, երբ փորձում էի պրակտիկայի ընթացքում ապրածս, լսածս ու սովորածս թղթին հանձնել:

Աշակերտները վերլուծում էին, սեփական կարծիք ձևավորում ցանկացած հարցի շուրջ ու վերջում հանգում ճշմարտության՝ չգերագնահատելով կամ թերագնահատելով երևույթը. նպատակը կյանքի է կոչված: Հետաքրքրությունը մեր շուրջն անսահման էր. մտնում ես դասարան, ու արդեն բոլորի հայացքները քոնն են, դու՝ իրենց արտացոլած պատկերում. նպատակը կյանքի է կոչված:

Սիրելի՜ Աբովյան, ինձ համար հարազատ դարձած բանասիրական ֆակուլտետը իր ուսանողների մեջ սերմանում է հայ գրականության ու լեզվի մշտարթուն պահապանը լինելու պատասխանատվությունը, հավատ է ներշնչում, որ ուսանողներս կարող ենք վառ օրինակ դառնալ շատերի համար մեր ամենօրյա տքնաջան կրթությամբ ու գործունեությամբ, մանկավարժի ու մարդու նկարագրով: Մեր ֆակուլտետի ուսանողների սիրտն էլ բաբախում է հետաքրքրության և ոգևորության դաշտում. չէ՞ որ իրենք բուհի առանձնահատուկ ու արարող կարգավիճակում են…

Սիրելի ու թանկ կրթօջախը իր սանի շուրթերով հիմա ջանում է բառերով ամփոփել այն, ինչ հոգու խորքում է իրականության ճշգրիտ մատուցմամբ, հարյուրամյա հարուստ պատմություն ունենալու գիտակցմամբ: Անվերջ արարելու, առաջ շարժվելու ու նորը կառուցելու, սեփական լեզվի ու

մշակույթի մշտարթուն պահապանը լինելու, հոգաչափ նվիրվելու, հար ու հավերժ հետագիծ թողնելու իրավունքով ու հաստատակամությամբ շարունակե՛ք ձեր կյանքի ուղին, աբովյանականնե՛ր...

Մենք անուղղելի լավատես ենք սիրո ու հարգանքի, հպարտության զգացումներով. մի-մի Աբովյան ունենք բուհի՝ հարազատ դարձած պատերի ներսում, երգում ենք մեզ բնորոշ, մեզ արտահայտող իսկական մի բան՝ մերը...

Սերն ու երախտագիտական բառերը համասփյուռ են, բոլորի շուրթերին… Եվ իմ խոնավ աչքերից հորդում է շնորհակալության հեղեղը...

Խոնարհումով...